2008

ՀՀ կենտրոնական բանկի
բանբեր

4-րդ
եռամսյակ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսական համակարգը 3

Վճարահաշվարկային համակարգի զարգացումներ 14

Մակրոտնտեսական ցուցանիշները 2008 թ. հունվար – դեկտեմբերին 22

ՀՀ ֆինանսական համակարգը
2008 թվականի չորրորդ եռամսյակում

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԸ

31.12.2008 թվականի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 22 առևտրային բանկեր՝ 380 մասնաճյուղերով:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԸ

2008 թվականի չորրորդ եռամսյակում առևտրային բանկերի ընդհանուր կապիտալն ավելացել է 9.7%-ով (20.7 մլրդ դրամով) և 31.12.2008 թ. դրությամբ կազմել 235.7 մլրդ դրամ:

Ընդհանուր կապիտալի աճը հիմնականում պայմանավորվել է առևտրային բանկերի կողմից 8.2 մլրդ դրամ զուտ շահույթի ապահովմամբ և ութ բանկի կողմից կանոնադրական հիմնադրամի ընդհանուր 10.2 մլրդ դրամ համալրմամբ:

Եռամսյակի ընթացքում ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշն աճել է 0.2 տոկոսային կետով և կազմել 27.5%:


Դիտարկվող ժամանակահատվածում ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշը ավելացել է 0.5 տոկոսային կետով՝ եռամսյակի վերջին կազմելով 23.0%:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվետու եռամսյակի ընթացքում ընդհանուր պարտավորություններն ավելացել են 6.7%-ով (49.3 մլրդ դրամով) և տարեվերջին կազմել 788.5 մլրդ դրամ: Ընդհանուր պարտավորությունների աճ է արձանագրվել 16 բանկում և նվազում՝ 6 բանկում:

Բանկերի պարտավորությունների կազմում հիմնականում աճել են բանկերի նկատմամբ (ներառյալ ԿԲ) պարտավորությունները՝ 59.1%-ով (78.6 մլրդ դրամով) և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունները՝ 25.2%-ով (12.1 մլրդ դրամով):

Առևտրային բանկերի ներգրաված միջոցների կառուցվածքը



1. Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ, 2. Իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներ, 3. Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ, 4. Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ, 5. Պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, 6. Բանկերի թղթակցային հաշիվներ և այլ պարտավորություններ (ներառյալ ԿԲ), 7. Վճարվելիք տոկոսներ, 8. Պարտավորություններ Կառավարության նկատմամբ, 9. Այլ պարտավորություններ

Հաշվետու ժամանակաշրջանում իրավաբանական և ֆիզիկական անձանց համընդհանուր ավանդները (ցպահանջ և ժամկետային միջոցների) նվազել են 6.4%-ով (30.8 մլրդ դրամով) և կազմել 449.5 մլրդ դրամ:

Ավանդների նվազումը տեղի է ունեցել ի հաշիվ իրավաբանական և ֆիզիկական անձանց ցպահանջ պարտավորությունների ընդհանուր 15.5%-ով (34.3 մլրդ դրամով) նվազման: Իրավաբանական և ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները ընդհանուր աճել են 9.6%-ով (15.4 մլրդ դրամով):


Եռամսյակի ընթացքում բանկերի լորո թղթակցային հաշիվների և բանկերի նկատմամբ (ներառյալ ԿԲ) այլ պարտավորությունների տեսակարար կշիռը ավելացել է 8.7 տոկոսային կետով, իսկ ավանդների տեսակարար կշիռը նվազել է 8.0 տոկոսային կետով:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐԸ

Չորրորդ եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի ընդհանուր ակտիվներն աճել են 7.3%-ով (70.1 մլրդ դրամով) և կազմել 1 տրլն 24.2 մլրդ դրամ: Դիտարկվող ժամանակաշրջանում 19 բանկում արձանագրվել է ակտիվների աճ, իսկ 3 բանկում՝ նվազում:


ՀՀ դրամով ակտիվներն աճել են 3.7%-ով (21.9 մլրդ դրամով), իսկ արտարժույթով ակտիվները՝ 13.1%-ով (48.2 մլրդ դրամով):

Առևտրային բանկերի ակտիվների ծավալները




Առևտրային բանկերի ակտիվների կառուցվածքը

30.09.2008



31.12.2008



1. Կանխիկ դրամական միջոցներ
2. Թղթակցային հաշիվներ բանկերում
3. Պետական արժեթղթեր (ներառյալ ռեպո համաձ-գրեր)
4. Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմակ. նկատմամբ
5. Թղթ. հաշ. ԿԲ-ում և այլ պահանջներ ԿԲ նկատմամբ
6. Վարկեր իրավաբանական անձանց
7. Վարկեր ֆիզիկական անձանց
8. Վարկեր բանկերի հետ կապված անձանց և աշխատակիցներին
9. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ
10. Հիմնական միջոցներ
11. Այլ արժեթղթեր
12. Լիզինգ, ֆակտորինգ (առանց միջբանկայինի)
13. Պահուստաֆոնդ
14. Այլ ակտիվներ

Ակտիվային հոդվածներով խոշոր աճեր են ապահովել առևտրային բանկերում թղթակցային նոստրո հաշիվները՝ 75.9%-ով (32.8 մլրդ դրամով), ԿԲ-ում թղթակցային հաշիվներն ու ԿԲ-ի նկատմամբ այլ պահանջները՝ ընդհանուր 37.5%-ով (28.4 մլրդ դրամով) և տնտեսության վարկերը՝ 4.0%-ով (23.8 մլրդ դրամով):

Դիտարկվող ժամանակաշրջանում ֆիզիկական անձանց վարկերն ավելացել են 3.7%-ով (11.1 մլրդ դրամով), իրավաբանական անձանց վարկերը՝ 3.3%-ով (9.3 մլրդ դրամով), իսկ բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին տրամադրված վարկերը՝ 21.9%-ով (3.4 մլրդ դրամով):


Եռամսյակի վերջին բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալը կազմել է 616.8 մլրդ դրամ, որի 50.0%-ը բաժին է ընկել ֆիզիկական անձանց, 47.0%-ը՝ իրավաբանական անձանց, 3.0%-ը՝ բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին:

Եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի ընդհանուր վարկերը և դեբիտորական պարտքերը (ներառյալ միջբանկային ավանդներն ու վարկերը, ռեպո համաձայնագրերը, լիզինգը, ֆակտորինգը) աճել են 3.6%-ով (22.7 մլրդ դրամով) և կազմել 650.7 մլրդ դրամ: Դրամով վարկերը և դեբիտորական պարտքերը աճել են 2.9%-ով և կազմել 399.1 մլրդ դրամ, իսկ արտարժույթով վարկային ներդրումները՝ 4.8%-ով և կազմել 251.6 մլրդ դրամ: Ընդհանուր վարկային ներդրումներում և դեբիտորական պարտքերում դրամով ներդրումների տեսակարար կշիռը նվազել է 0.5 տոկոսային կետով և կազմել 61.3%:

Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը նվազել են 24.7%-ով, իսկ ռեզիդենտներին տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը աճել են 4.1%-ով և կազմել են համապատասխանաբար 7.9 մլրդ դրամ և 642.8 մլրդ դրամ:

Զգալի ավելացել են առևտրի, գյուղատնտեսության ճյուղերի վարկերը և հիփոթեքային վարկերը՝ համապատասխանաբար 6.1 մլրդ դրամով, 5.0 մլրդ դրամով և 2.6 մլրդ դրամով: Ըստ տնտեսության ճյուղերի՝ ռեզիդենտների վարկային ներդրումների կառուցվածքում էական փոփոխություններ չեն արձանագրվել:

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումները ըստ տնտեսության ճյուղերի



1. Արդյունաբերություն, 2.Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական վարկեր, 9. Հիփոթեքային վարկեր, 10. Այլ ճյուղեր

Եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի ստանդարտ ակտիվների տեսակարար կշիռը նվազել է 0.2 տոկոսային կետով՝ կազմելով ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի 96.1%-ը: Տարեվերջին բանկային համակարգի «հսկվող» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը կազմել են ընդհանուրի 3.0%-ը, «ոչ ստանդարտ» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.5%-ը, «կասկածելի» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.4%-ը:


Առևտրային բանկերի ընդհանուր իրացվելիության նորմատիվային ցուցանիշը եռամսյակի ընթացքում նվազել է 1.7 տոկոսային կետով, իսկ ընթացիկ իրացվելիության ցուցանիշն ավելացել է 10.7 տոկոսային կետով և համապատասխանաբար կազմել են 23.8% և 103.1%:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ

2008թ. ընթացքում առևտրային բանկերն ապահովել են ընդհանուր 27.1 մլրդ դրամ զուտ շահույթ, ինչը գերազանցել է նախորդ տարվա զուտ շահույթը 30.5%-ով: Տարվա ընթացքում 19 բանկ աշխատել է շահույթով և 3 բանկ՝ վնասով:

Առևտրային բանկերն ապահովել են ընդհանուր 171.1 մլրդ դրամի համախառն եկամուտ՝ իրականացնելով 136.0 մլրդ դրամի համախառն ծախսեր: Բանկային համակարգի շահույթը մինչև հարկումը կազմել է 35.0 մլրդ դրամ:

Առևտրային բանկերի եկամուտների և ծախսերի կառուցվածքը 2008թ. ընթացքում



2008թ. եկամուտների կազմում տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը կազմել է 55.2%, ոչ տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը՝ 20.7% և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներից վերադարձի տեսակարար կշիռը՝ 24.1%: Տոկոսային եկամուտների 83.8%-ը բաժին է ընկել տնտեսության վարկերից ստացված եկամուտներին: Ոչ տոկոսային եկամուտների կազմում ստացված միջնորդավճարները կազմել են 44.9%-ը, իսկ արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտները՝ 41.4%-ը:

Համախառն ծախսերում մեծ տեսակարար կշիռը բաժին է ընկել ոչ տոկոսային ծախսերին, որը կազմել է 40.1%, իսկ տոկոսային ծախսերին և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին կատարված մասհանումներին բաժին են ընկել համապատասխանաբար 25.6% և 34.3% տեսակարար կշիռներ: Ոչ տոկոսային ծախսերում զգալի տեսակարար կշիռը՝ 45.9%-ը, բաժին է ընկել բանկային համակարգի աշխատակիցների աշխատավարձին և դրան հավասարեցված այլ վճարներին, իսկ տոկոսային ծախսերում 50.5% տեսակարար կշիռը բաժին է ընկել ժամկետային ավանդների դիմաց վճարված տոկոսներին:

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ[1]

Հաշվետու եռամսյակի ընթացքում վարկային կազմակերպության գործունեության լիցենզիա են ստացել «Յունիլիզինգ» ՓԲԸ-ն և «Անիվ» ՍՊԸ-ն: 31.12.2008 դրությամբ ՀՀ տարածքում գործել են 25 վարկային կազմակերպություններ, որոնց մասնաճյուղերի ընդհանուր քանակը քառասունութ է:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվների մեծությունը 2008թ. չորրորդ եռամսյակի ընթացքում աճել է 8.2%-ով (5.0 մլրդ դրամով) և կազմել 65.8 մլրդ դրամ: Ակտիվների աճ է արձանագրվել 19 վարկային կազմակերպությունում, իսկ նվազում՝ 5 վարկային կազմակերպությունում:

Վարկային կազմակերպությունների կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի ընդհանուր ծավալն աճել է 7.5%-ով (3.7 մլրդ դրամով): Արտարժութային վարկերն աճել են 4.1 մլրդ դրամով, դրամային վարկերը նվազել են 382 մլն դրամով: Ֆիզիկական անձանց վարկերն ավելացել են 8.7%-ով և

[1] *Տվյալները ներկայացված են 24 վարկային կազմակերպության համար, քանի որ «Անիվ» ՈՒՎԿ ՍՊԸ-ն գրանցման լիցենզիան ստացել է 27.12.2008թ.:*

կազմել 34.2 մլրդ դրամ, իրավաբանական անձանց վարկերը՝ 5.2%-ով և կազմել 18.9 մլրդ դրամ: Լիզինգի ծավալն աճել է 10.5%-ով՝ կազմելով 4.9 մլրդ դրամ:

Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի և դեբիտորական պարտքերի ընդհանուր ծավալն աճել է 8.9%-ով և կազմել 62.5 մլրդ դրամ: Վարկային ներդրումներում զգալի ավելացել են հիփոթեքային վարկերի (19.3% աճ) և գյուղատնտեսության վարկերի (12.3% աճ) ծավալները: 31.12.2008թ. դրությամբ վարկային ներդրումներում ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկել առևտրի ոլորտի վարկավորմանը՝ 15.9%: Սպառողական վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր վարկային ներդրումներում կազմել է 13.3%, գյուղատնտեսական վարկերինը՝ 12.8%, հիփոթեքային վարկերինը՝ 11.0%, շինարարությանը տրամադրված վարկերինը՝ 10.8%, արդյունաբերության վարկերինը՝ 9.9%, իսկ մնացյալ 26.3% տեսակարար կշիռը բաժին է ընկել տնտեսության այլ ճյուղերի և ֆինանսական հատվածի վարկավորմանը:

Վարկային ներդրումների ռիսկայնության դասերի առումով՝ եռամսյակի ընթացքում ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի կազմում ստանդարտ վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը 0.5 տոկոսային կետով նվազել է և կազմել 96.0%:

Հաշվետու եռամսյակի ընթացքում վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի մեծությունը աճել է 13.3%-ով (2.1 մլրդ դրամով) և կազմել 18.1 մլրդ դրամ: Կանոնադրական հիմնադրամ են համալրել չորս վարկային կազմակերպություն՝ ընդհանուր 1.5 մլրդ դրամի չափով:

2008թ. չորս եռամսյակների զուտ շահույթը կազմել է 2.8 մլրդ դրամ: Տարեսկզբից շահույթով է աշխատել 19, իսկ վնասով՝ 5 վարկային կազմակերպություն:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր պարտավորությունների մեծությունը աճել է 6.4%-ով (2.9 մլրդ դրամով) և 31.12.2008թ. դրությամբ կազմել 47.8 մլրդ դրամ: Ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ ժամկետային պարտավորությունները նվազել են 9.0% տոկոսով (1.1 մլրդ դրամով)՝ կազմելով 10.9 մլրդ դրամ: Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունները աճել են 3.6 մլրդ դրամով՝ կազմելով 32.5 մլրդ դրամ:

ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների արտաքին պարտքը 2008 թվականի վերջին


ՀՀ առևտրային բանկերի ու վարկային կազմակերպությունների վարկային պարտավորությունները արտաքին աշխարհի նկատմամբ 2008 թվականի վերջին կազմել են 555 մլն դոլար: 2008 թվականի ընթացքում առևտրային բանկերն ու վարկային կազմակերպությունները արտաքին աշխարհից ներգրավել են 573 մլն դոլար վարկային միջոցներ, նախկինում ձեռք բերված վարկերի դիմաց կատարել են 380 մլն դոլար արտաքին պարտքի սպասարկում:

2008 թվականի վերջին առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների հիմնական վարկատու երկրներն են եղել՝ Ռուսաստանը, որի տեսակարար կշիռը ամբողջի մեջ կազմել է 16.4 % (նախորդ տարի՝ 14.4 %), Ֆրանսիան՝ 9.4 % (նախորդ տարի՝ 3 %), Լատվիան՝ 9.1 % (նախորդ տարի՝ 10.8 %), Գերմանիան՝ 7.5 % (նախորդ տարի՝ 6.2 %): Վարկերի մոտ 25.2 %-ը տրվել է միջազգային կազմակերպությունների կողմից:

Արտաքին աշխարհից ներգրավված վարկերը բանկերը հիմնականում տեղաբաշխել են տնտեսության հետևյալ հատվածներում՝ 184 մլն դոլարը արդյունաբերության, 94 մլն դոլարը՝ գյուղատնտեսության և 85 մլն դոլարը՝ ֆինանսական:

2008 թվականի վերջին ներգրավված վարկերի միջին կշռված տոկոսադրույքը նախորդ տարվա վերջի համեմատ նվազել է և կազմել 6.3 %: Արտաքին վարկերի մոտ 57.9 %-ը լողացող (LIBOR, EURIBOR, ԿԲ ՊՊ) տոկոսադրույքով են: Վարկերի միջին ժամկետայնությունը մոտ 3.9 տարի է: Կարճաժամկետ վարկերի տեսակարար կշիռը նվազել է և կազմել ներգրավված վարկերի 12.4 %-ը (նախորդ տարվա վերջին՝ 13.7 %):

ՀՀ առևտրային բանկերի արտաքին մասնավոր պարտքը 2003-2008 թթ.



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

31.12.2008 թ. դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործել է 11 ապահովագրական ընկերություն:

Չորրորդ եռամսյակի ընթացքում ապահովագրական ընկերությունների ակտիվներն աճել են 1.3%-ով՝ 31.12.2008 թվականի դրությամբ կազմելով 11.7 մլրդ դրամ: Ապահովագրական ընկերությունների ընդհանուր կապիտալն աճել է 1.7%-ով՝ կազմելով 7.5 մլրդ դրամ, իսկ պարտավորությունները՝ 0.6%-ով՝ կազմելով 4.2 մլրդ դրամ:

Ապահովագրական ընկերությունների ակտիվների կազմում համեմատաբար բարձր տեսակարար կշիռը բաժին է ընկել ընթացիկ ավանդներին և այլ ներդրումներին (47.0% տեսակարար կշիռ), ուղղակի ապահովագրության գծով ստացվելիք գումարներին (13.1% տեսակարար կշիռ) և արժեթղթերում ներդրումներին (13.1% տեսակարար կշիռ):

Պարտավորությունների կազմում համեմատաբար բարձր տեսակարար կշիռը բաժին է ընկել չվաստակած ապահովագրավճարների պահուստին (41.7% տեսակարար կշիռ) և համաապահովագրողներին, վերաապահովագրողներին փոխանցվելիք գումարներին (36.8% տեսակարար կշիռ):

Ապահովագրական ընկերությունների զուտ շահույթը 2008 թվականին կազմել է 720.0 մլն դրամ: Շահույթով են աշխատել 8, իսկ վնասով՝ 3 ընկերություն:

2008 թվականի ընթացքում հաշվեգրված ապահովագրավճարների մեծությունը կազմել է 7.8 մլրդ դրամ, իսկ վերաապահովագրողին փոխանցվող ապահովագրավճարները՝ 4.0 մլրդ դրամ կամ ապահովագրավճարների 51.1%-ը:

Ապահովագրական հատուցումների մեծությունը տարվա ընթացքում կազմել է 1.4 մլրդ դրամ, իսկ վերաապահովագրողներից ստացվող գումարներն ապահովագրական հատուցումների գծով՝ 554.0 մլն դրամ կամ ապահովագրական հատուցումների 40.3%-ը:

Ապահովագրական ընկերությունների գործող պայմանագրերի քանակը 31.12.2008 թ. դրությամբ կազմել է 48.8 հազար հատ: Գործող պայմանագրերի ապահովագրական գումարների մեծությունը 31.12.2008 թ. դրությամբ կազմել է 2.2 տրլն դրամ (նախորդ եռամսյակի վերջին՝ 2.12 տրլն դրամ):

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

2008 թ. վերջի դրությամբ ՀՀ արժեթղթերի շուկայում գործել են ներդրումային ծառայություններ մատուցող 22 բանկ և 10 ներդրումային ընկերություն, ընդ որում՝ բոլոր տասը ընկերությունները կարող են իրենց կամ հաճախորդի անունից և իրենց կամ հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքներ իրականացնել: Ներդրումային ընկերություններից ինը կարող են նաև հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականներ ընդունել և հաղորդել, վեցը՝ արժեթղթերով ներդրումների հետ կապված խորհրդատվություն տրամադրել, վեցը՝ իրականացնել արժեթղթերի տեղաբաշխման գործունեություն, հինգը՝ արժեթղթերի փաթեթի կառավարում և 4-ը՝ արժեթղթերի պահառության գործունեություն:

2008 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ արժեթղթերի շուկայում ներդրումային գործունեության շրջանակներում իրականացվել է 78.0 մլրդ դրամի արժեթղթերի առք ու վաճառքի գործառնություն՝ նախորդ եռամսյակի համեմատ աճելով 80.3%-ով: Պետական պարտատոմսերով գործառնությունների ծավալը կազմել է ընդհանուր արժեթղթերով առք ու վաճառքի գործառնությունների 78.7%-ը կամ 61.4 մլրդ դրամ՝ նախորդ եռամսյակի համեմատ աճելով 55.0%-ով: Բաժնետոմսերով առք ու վաճառքի գործառնությունների ծավալը կազմել է 11.2 մլրդ դրամ՝ նախորդ եռամսյակի համեմատ աճելով 6.8 անգամ, իսկ կորպորատիվ արժեթղթերով առք ու վաճառքի գործառնությունների ծավալը կազմել է 5.4 մլրդ դրամ՝ նախորդ եռամսյակի համեմատ աճելով 166.9%-ով:

Պետական պարտատոմսերով գործառնությունների շրջանառության մեջ ամենամեծ մասնաբաժինը ունեցել են պետական միջին ժամկետայնության պարտատոմսերը՝ 39.6%: Կարճաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերով առք ու վաճառքի գործառնությունների մասնաբաժինները պետական պարտատոմսերի ընդհանուր շրջանառության մեջ կազմել են համապատասխանաբար 38.1% և 22.3%-ը:

2008 թ. չորրորդ եռամսյակի ընթացքում կարգավորված շուկայում, մասնավորապես Հայաստանի ֆոնդային բորսայում իրականացված գործառնությունները կազմել են ներդրումային գործունեության շրջանակներում իրականացված ընդհանուր գործառնությունների 5.0%-ը:

Հայաստանի ֆոնդային բորսայի շրջանառությունը նախորդ եռամսյակի համեմատ աճել է ավելի քան երեք անգամ և կազմել 1.9 մլրդ դրամ, ընդ որում՝ 51.2%-ը կազմել են պետական պարտատոմսերով գործարքները, իսկ կորպորատիվ պարտատոմսերով գործարքները՝ 39.9%-ը:

Ներդրումային գործունեության շրջանակներում իրականացված ռեպո գործառնությունների ծավալը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 24.6%-ով և կազմել է 186.9 մլրդ դրամ, որից 77.5 մլրդ դրամը կազմել են երկարաձգված գործարքները:

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հավատարմագրային կառավարման վերցված միջոցների ծավալը կազմել է 1.6 մլրդ դրամ:

31.12.2008թ. դրությամբ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստր վարող թողարկողների թիվը կազմել է 1202 ընկերություն, իսկ ՀԿԴ-ում ռեեստր վարող թողարկողների արժեթղթերի սեփականատերերի թիվը՝ 128329 մարդ:

2008 թվականի չորրորդ եռամսյակի վերջի դրությամբ ֆոնդային բորսայում ցուցակված են եղել 16 հաշվետու թողարկողների արժեթղթեր: Հաշվետու թողարկող ընկերություններից 4-ը բանկ են, 1-ը՝ ներդրումային ընկերություն: Ընդ որում, հաշվետու թողարկողներից 9-ը թողարկել են բաժնետոմսեր, իսկ 8-ը՝ պարտատոմսեր:

Հաշվետու եռամսյակի ընթացքում կորպորատիվ պարտատոմսեր են տեղաբաշխել «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ն, «ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ն, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն, «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն և «Արդշինհինվեստբանկ» ՓԲԸ-ն՝ ընդհանուր 5.3 մլրդ դրամ ծավալով:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԱՇՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օրենսդրական փոփոխություններ

1. 2008 թվականի 4-րդ եռամսյակում ՀՀ Ազգային ժողովը ընդունել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակված «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքը և դրա ընդունմամբ պայմանավորված՝ այլ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին օրենքները:

Օրենքով Հայաստանի Հանրապետությունում ներդրվում է նոր ինստիտուտ, որը նպատակ ունի՝

ա. Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայում բարձրացնել ֆինանսական միջնորդային և վարկային գործունեության ծավալները.

բ. լրացուցիչ մեխանիզմներ ստեղծել ֆինանսական շուկայում սպառողների շահերի պաշտպանության համար.

գ. ստեղծել ֆինանսական կազմակերպությունների կողմից վարկավորման ռիսկերի գնահատման մեխանիզմներ և պաշտպանել վարկատուների շահերը.

դ. ներդնել և զարգացնել սկորինգային համակարգը Հայաստանի Հանրապետությունում.

ե. հնարավորություն ընձեռել սպառողներին վարկային պատմության ստեղծման միջոցով հասնելու մեծ ծավալների վարկերի ստացմանը.

Օրենքը մշակվել է միջազգային լավագույն փորձի հիման վրա և փորձաքննության է ենթարկվել USAID-ի օտարերկրյա փորձագետների կողմից:

Սպառողների շահերի պաշտպանության տեսանկյունից՝ օրենքը սահմանում է.

ա. վարկային բյուրոյի կողմից մատուցվող ծառայությունների մատչելիությունը սպառողներին, մասնավորապես՝ վարկային բյուրոյի կողմից վարկային զեկույցի անվճար տրամադրում անձին՝ տարին մեկ անգամ, ինչպես նաև նրա համար անբարենպաստ հետևանքներ առաջացնող վարկային զեկույցների անվճար տրամադրում (օրինակ՝ բանկը մերժել է վարկ տրամադրել, քանի որ անձն ունի վատ վարկային պատմություն).

բ. վարկային տեղեկատվության ճշգրտման, վիճարկման, փոփոխման ընթացակարգերի մանրամասն կարգավորում. անձը իրավունք է ստանում ձեռք բերելու իր վերաբերյալ հավաքված ամբողջ տեղեկատվությունը, սխալներ հայտնաբերելու դեպքում ուղղելու սխալ տեղեկատվությունը.

գ. վարկային բյուրոյի թափանցիկ գործունեությունը (վարկային բյուրոյի ինտերնետային էջի պարտադիր առկայություն, որտեղ պետք է հրապարակվի ու թարմացվի մատուցվող ծառայությունների, վեճերի լուծման ընթացակարգի, վարկային զեկույցների ստացման վերաբերյալ տեղեկատվությունը).

դ. վարկային բյուրոյի լիցենզավորումն ու վերահսկողությունը. վարկային բյուրոյի գործունեությանը ներկայացվում են կոնկրետ պահանջներ և սպառողների շահերի պաշտպանության նպատակով իրականացվում է այդ գործունեության վերահսկողություն:

2. ՀՀ Ազգային ժողովն ընդունել է նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակված ««Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը: Օրենքը սահմանում է, որ բանկերը, վարկային կազմակերպությունները, վճարահաշվարկային կազմակերպությունները, արժեթղթերի շուկայում հաշվետու թողարկողները, ներդրումային ծառայություններ մատուցող անձինք, կարգավորվող շուկայի օպերատորը, կենտրոնական դեպոզիտարիան, ապահովագրական ընկերությունները, վերաապահովագրական ընկերությունները, ապահովագրական բրոքերները պարտավոր են ֆինանսական հաշվետվությունները կազմել և ներկայացնել հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին համապատասխան՝ առանց Հայաստանի Հանրապետության կողմից դրանց անմիջական թարգմանության, իսկ այլ կազմակերպությունները պարտավոր են հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները կիրառել ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով՝ հրապարակումից հետո վեցամսյա ժամկետի ավարտին հաջորդող տարվա հունվարի մեկից:

3. ՀՀ Ազգային ժողովը ընդունել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակված «Համահայկական բանկի մասին» ՀՀ օրենքը և դրա ընդունմամբ պայմանավորված՝ այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքները:

Օրենքների ընդունման նպատակը Համահայկական բանկի, ինչպես նաև այդ բանկի գործունեության համար իրավական հիմքերի ստեղծումն է:

Օրենքով սահմանվել է բանկի գործունեության նպատակը, գործունեության հիմնական սկզբունքները, կառավարման մարմինների ձևավորման և գործունեության կարգը և այլն: Համահայկական բանկի նպատակն է նպաստել ուժեղ, մրցունակ և գիտելիքի վրա հիմնված հայության ներուժի ձևավորմանը և դա ուղղել ամբողջ հայության մրցունակության ավելացմանը համաշխարհային շուկայում:

Նշված կազմակերպությունը հանդիսանում է բանկ՝ ստանալով բանկային գործունեության լիցենզիա և իրականացնում է բանկերին բնորոշ գործառնություններ՝ բացի ռեզիդենտներից հրապարակային առաջարկի միջոցով միջոցներ ներգրավելուց:

Համահայկական բանկի գործունեությունը կարգավորվում է բանկերի գործունեությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներով և դրանց հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով, եթե Օրենքով այլ բան նախատեսված չէ, կարգավորվում և վերահսկվում է Կենտրոնական բանկի կողմից:

Համահայկական բանկը գործում է որոշակի սկզբունքների հիման վրա, մասնավորապես՝ բանկերի հետ չմրցելու, գործունեության ծրագիր կազմելիս ՀՀ կառավարության կողմից լիազորված մարմնի ռազմավարությամբ և այլն:

4. ՀՀ կենտրոնական բանկը ՀՀ կառավարություն է ներկայացրել ««Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Նշված նախագծի ներկայացումը պայմանավորված էր գործող օրենսդրությամբ սահմանված որոշ պայմանների խստացմամբ և որոշ դրույթների հստակեցմամբ, մասնավորապես՝ խմբավորվել, ավելացվել և հստակեցվել են վճարահաշվարկային համակարգ ստեղծելու, դրան անդամակցելու և վճարահաշվարկային կազմակերպության լիցենզավորման մերժման հիմքերը, հստակեցվել է «վճարահաշվարկային ծառայություն» սահմանումը՝ առավելագույնս համապատասխանեցվելով ԵՄ օրենսդրության պահանջներին, սահմանվել է վճարահաշվարկային կազմակերպության ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվ՝ 100 միլիոն դրամի չափով, վճարահաշվարկային կազմակերպության կողմից քաղաքացիների հանդեպ պարտավորությունները չկատարելու դեպքում վերջինիս բանկային հաշիվներով գործառնությունների կասեցման ընթացակարգ, վճարահաշվարկային կազմակերպության իրավունքը՝ իր գործառնական գործառույթների կատարումը պատվիրակել այլ անձի, հստակեցվել են օրենքով սահմանված ժամկետները, պատասխանատվության միջոցները: Կատարվել են նաև տեխնիկական, խմբագրական և բովանդակային լրացումներ և փոփոխություններ:

Նշված նախագծի ընդունումը կխստացնի վճարահաշվարկային համակարգերի և կազմակերպությունների ստեղծման և գործունեության հետ կապված ընթացակարգերը և կնպաստի վերջիններիս գործունեության առավել արդյունավետ կարգավորմանը:

Ենթաօրենսդրական փոփոխություններ

2008 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից փոփոխություններ են կատարվել բանկային և վարկային կազմակերպությունների գործունեությանն առնչվող հետևյալ իրավական ակտերում.

1. «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում, մասնավորապես.

- Բանկերի կողմից իրացվելիության կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով պարտադիր պահուստավորման ժամանակահատվածը սահմանվել է 28 կամ 35 օրյա՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված պարտադիր պահուստավորման օրացույցին համապատասխան: Տվյալ մոտեցումը կնվազեցնի թղթակցային հաշիվների և տոկոսադրույքների տատանողականությունը, քանի որ այն համահունչ կլինի պետական բյուջեի և տնտեսավարող սուբյեկտների սեզոնայնությանը: Արդյունքում՝ կբարելավվի իրացվելիության կառավարման մակարդակը, և թղթակցային հաշիվներում կնվազի ավելցուկային միջոցների ծավալը:
- Որպես ընդհանուր կապիտալի համալրման նոր գործիք՝ ներգրավված երկարաժամկետ ստորադաս փոխառությունները ներառվել են լրացուցիչ կապիտալի կազմում: Միևնույն ժամանակ, հստակեցվել է ստորադաս փոխառությունների սահմանումը:

2. «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում, ըստ որի՝ հաճախորդների և սպառողների շահերի պաշտպանության օրենսդրության պահանջների համաձայն՝ բանկերը պարտավոր են հաշվարկել և հրապարակել իրենց կողմից իրական հատվածից ներգրավված և տեղաբաշխված միջոցների արդյունավետ տոկոսադրույքները.

- ցպահանջ միջոցները ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններում ընդգրկվում են ակտիվների և պարտավորությունների՝ հաշվետվության օրվա դրությամբ մնացորդային գումարներով, իսկ նրանց տոկոսադրույքի հաշվարկման համար կիրառվում է համաձայնեցված տարեկան տոկոսադրույքի (ՀՏՏ) հաշվարկման (annualized agreed rate, AAR) բանաձևը:
- ժամկետային միջոցների տոկոսադրույքի հաշվարկման համար կիրառվում է մանրամասն սահմանված էֆեկտիվ տոկոսադրույքի (ՄՍԷՏ) հաշվարկման (narrowly defined effective rate, NDER) բանաձևը:
- Չև թիվ 17-ում նախատեսվել է նաև արտացոլել տեղաբաշխված գումարների տարեկան փաստացի տոկոսադրույքները: Նշված տոկոսադրույքը հաշվարկվում է նույն բանաձևով և մեթոդաբանությամբ, ինչ ՄՍԷՏ-ը, սակայն ներառում է ինչպես բոլոր տոկոսներն, այնպես էլ այլ վճարումները, որոնք վարկառուն պարտավոր է վճարել տվյալ միջոցը ստանալու համար: Համանման փոփոխություններ են կատարվել նաև «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ում:

2008թ. չորրորդ եռամսյակի ընթացքում արժեթղթերի շուկայի կարգավորման դաշտում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

1. Ուժի մեջ են մտել ՀՀ ԿԲ խորհրդի՝ 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ում ՀՀ ԿԲ խորհրդի՝ 2008 թվականի հուլիսի 1-ի թիվ 192-Ն որոշմամբ հաստատված փոփոխությունները և լրացումները:

2. Ուժի մեջ են մտել ՀՀ ԿԲ խորհրդի՝ 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 15-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի ղեկավարների ու ներդրումային ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 4/05-ում ՀՀ ԿԲ խորհրդի՝ 2008 թվականի հուլիսի 1-ի թիվ 191-Ն որոշմամբ հաստատված փոփոխությունները և լրացումները:

3. Ուժի մեջ են մտել ՀՀ ԿԲ խորհրդի՝ 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 17-Ն որոշմամբ հաստատված «Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպե-

րատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ում ՀՀ ԿԲ խորհրդի՝ 2008 թվականի հուլիսի 1-ի թիվ 193-Ն որոշմամբ հաստատված փոփոխությունները և լրացումները:

4. Ուժի մեջ են մտել ՀՀ ԿԲ խորհրդի՝ 2008 թվականի հունվարի 15-ի թիվ 14-Ն որոշմամբ հաստատված «Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02-ում ՀՀ ԿԲ խորհրդի՝ 2008 թվականի հուլիսի 1-ի թիվ 190-Ն որոշմամբ հաստատված փոփոխությունները և լրացումները:

Վերոնշյալ փոփոխությունների և լրացումների նպատակն է հնարավորինս նույնականացնել ֆինանսական շուկայի մասնակիցների լիցենզավորման և գրանցման, մասնաճյուղերի գրանցման, կազմակերպությունում նշանակալից մասնակցության ձեռքբերման, ղեկավարների որակավորման և գրանցման ընթացակարգերը:

5. Ուժի մեջ են մտել ՀՀ ԿԲ խորհրդի՝ 2008 թվականի հուլիսի 1-ի թիվ 185-Ն որոշմամբ հաստատված «Արժեթղթերի շուկայի վերահսկվող անձանց հեռակա վերահսկողություն իրականացնելու նպատակով Կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվությունների, տեղեկանքների, բացատրագրերի և նման այլ փաստաթղթերի՝ հասարակությանը մատչելի դարձնելու կարգը և այդ փաստաթղթերը հասարակությանը մատչելի դարձնելու պահանջից բացառությունները» կանոնակարգ 4/08-ում ՀՀ ԿԲ խորհրդի՝ դեկտեմբերի 16-ի թիվ 358-Ն որոշմամբ հաստատված փոփոխությունները և լրացումները, որոնց նպատակն է սպառողներին հնարավորություն տալ մեկ աղբյուրից ստանալու վերահսկվող անձանց ֆինանսական վիճակի և կայունության մասին կարևոր և համակողմանի անհրաժեշտ տեղեկատվություն, ինչպես նաև համեմատաբար հեշտությամբ համեմատելու այդ տվյալները, որոնք կարևոր են որոշումներ կայացնելու համար:

6. Ուժի մեջ է մտել ՀՀ ԿԲ խորհրդի՝ 2008 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 356-Ն որոշմամբ հաստատված «Կարգավորվող շուկայի օպերատորի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/03-ը:

7. Ուժի մեջ է մտել ՀՀ ԿԲ խորհրդի՝ 2008 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 357-Ն որոշմամբ հաստատված «Կենտրոնական դեպոզիտարիայի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/04-ը:

Կանոնակարգ 5/03-ի և Կանոնակարգ 5/04-ի ներդրմամբ ներմուծվել է կարգավորվող շուկայի օպերատորի և Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող հաշվետվական ձևերի նոր ռեժիմ, օպերատորի և Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից հաշվետվությունների՝ ԿԲ ներկայացման կարգը համապատասխանեցվել է ՀՀ մյուս ֆինանսական կազմակերպությունների կողմից ԿԲ ներկայացվող հաշվետվությունների ներկայացման կարգին, հաշվետվությունների ներկայացման կարգը համապատասխանեցվել է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

8. Ուժի մեջ են մտել ՀՀ ԿԲ խորհրդի՝ 2008 թվականի օգոստոսի 4-ի թիվ 116-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանը» և «Ներդրումային ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգը»: Խորհրդի որոշման նպատակներ են.

ա) Ապահովել ներդրումային ընկերությունների կողմից իրականացվող գործառնությունների առանձնահատկությունների արտացոլումը հաշվապահական հաշվառման մեջ, քանի որ մինչ այդ ներդրումային ընկերությունները հաշվապահական հաշվառումը վարում էին համաձայն «Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանի», որը չէր արտացոլում ներդրումային ընկերությունների՝ որպես ֆինանսական կազմակերպության, գործունեության առանձնահատկությունները:

բ) Համապատասխանեցնել ներդրումային ընկերությունների հաշվապահական հաշվառումը ՀՀՀՀՍ-ներին:

գ) Համապատասխանեցնել ներդրումային ընկերությունների հաշվապահական հաշվառումը բանկերի, վարկային կազմակեպությունների հաշվապահական հաշվառմանը՝ ապահովելու համար ֆինանսական համակարգի քաղաքականության միասնական մոտեցումները նաև հաշվապահական հաշվառման ոլորտում:

9. 2008 թվականի դեկտեմբերի 30-ին ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 374-Ն որոշմամբ հաստատվել են «Ներդրումային ընկերությունների հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի

ձևերը» և «Ներդրումային ընկերությունների հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերի լրացման ցուցումները»: Մինչ որոշման ընդունումը ներդրումային ընկերությունները ֆինանսական հաշվետվությունները կազմում էին «Կազմակերպությունների տարեկան (ամբողջական փաթեթով միջանկյալ) ֆինանսական հաշվետվությունների ձևերին և դրանց լրացման ցուցումներին համապատասխան: Վերջինս չի համապատասխանում ՀՀՀՀՍ-ներին, քանի որ չի արտացոլում ներդրումային ընկերությունների՝ որպես ֆինանսական հաստատության բնորոշ առանձնահատկությունները: Նոր որոշմամբ վերացվել է այս անհամապատասխանությունը և ապահովվել է ներդրումային ընկերությունների հաշվետվությունների օգտագործողների կողմից հաշվետվություններում ներառված տեղեկատվության հիման վրա որոշումների կայացման համար առավել արժանահավատ և էական տեղեկություններ ունենալու հնարավորությունը:

Ապահովագրության շուկայի կարգավորման նպատակով 2008թ. չորրորդ եռամսյակի ընթացքում ուժի մեջ են մտել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344 Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական և ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզավորումը, ապահովագրական գործակալի հաշվառումը, Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցումը, ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ապահովագրական ընկերության գործունեության գործարար ծրագրի ձևը, ներկայացման կարգը և ժամկետները, ապահովագրական ընկերության և ապահովագրական բրոքերային ընկերության ղեկավարների ու պատասխանատու անձանց որակավորումը, ապահովագրական ընկերության ղեկավարներին, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց ներկայացվող մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշները, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը, ապահովագրական ընկերության ղեկավարների, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց թեկնածուների մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 3/01-ում ՀՀ ԿԲ խորհրդի՝ 2008 թվականի հուլիսի 1-ի թիվ 188-Ն որոշմամբ հաստատված փոփոխությունները և լրացումները: Փոփոխությունների և լրացումների նպատակն է հնարավորինս նույնականացնել ֆինանսական շուկայի մասնակիցների լիցենզավորման և գրանցման, մասնաճյուղերի գրանցման, կազմակերպությունում նշանակալից մասնակցության ձեռքբերման, ղեկավարների որակավորման և գրանցման ընթացակարգերը:

Վճարահաշվարկային հարաբերությունների զարգացումը 2008 թ. չորրորդ եռամսյակում

ՀՀ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ


2008 թ. չորրորդ եռամսյակում պահպանվել են վճարահաշվարկային բնագավառի բնականոն աճի միտումները:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ տարածքում անկանխիկ վճարումների ծավալը կազմել է 4695 մլրդ դրամ (քանակը՝ 1538939), ընդ որում՝ ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված վճարումների ծավալը կազմել է 2950 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 702276: 2008 թ. չորրորդ եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկի համակարգերով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը նախորդ տարվա չորրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 30%-ով (695 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 61%-ով (265654-ով): ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված փոխանցումների ծավալը 2008թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 31%-ով (704 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 114095-ով (19 %):

ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական ծավալը կազմել է մոտ 46 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 10973: Դրամական փոխանցումների միջին օրական ծավալը 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 11 մլրդ դրամով (քանակը՝ 4151-ով):

2008 թ. չորրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացված վճարումներում (առանց բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումների) շարունակել են մեծ տեսակարար կշիռ կազմել Գանձապետարանի նախաձեռնած, ինչպես նաև վերջինիս ուղղված փոխանցումները, որոնք կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 44%-ը, քանակի 50.3%-ը: ՀՀ կենտրոնական բանկի միջոցով Գանձապետարան ուղղված, ինչպես նաև վերջինիս նախաձեռնած փոխանցումների ընդհանուր ծավալը նախորդ տարվա չորրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 3.3%-ով (49 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 144599-ով (69.3 %):

ՀՀ ԿԲ միջոցով իրականացված վճարումների քանակը և ծավալը (առանց բորսայական փոխանցումների)



2008 թ. չորրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ տարածքում պլաստիկ քարտերով իրականացվել է 107 մլրդ դրամի 2028749 գործառնություն: Այդ թվում՝ քարտերով անկանխիկ վճարումների ծավալը կազմել է մոտ 8.1 մլրդ դրամ: Նշված անկանխիկ գործառնությունների ծավալում ինտերնետ միջավայրում իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 1040 մլն դրամ (այդ թվում՝ էլեկտրոնային առևտուր՝ 302 մլն դրամ, քարտից-քարտ փոխանցումներ՝ 738 մլն դրամ): Եռամսյակի վերջի դրությամբ շրջանառու-

թյան մեջ գտնվող քարտերի ընդհանուր քանակը կազմել է 454357, որը 2008թ. երրորդ եռամսյակի վերջի համեմատությամբ ավելացել է 6%-ով (25568 քարտով): Հաշվետու եռամսյակի ընթացքում քարտերով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը կազմել է քարտային գործառնությունների մոտ 7.6%-ը: Ընդհանուր առմամբ, քարտերով անկանխիկ գործառնությունների ծավալը նախորդ ժամանակահատվածի համեմատ ավելացել է 11%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում առևտրային բանկերի և դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով ֆիզիկական անձանց ուղղված դրամական փոխանցումները 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ ավելացել են 15%-ով և կազմել 211 մլրդ դրամ, իսկ արտասահման կատարված փոխանցումների ծավալը նվազել է 19%-ով և կազմել 85 մլրդ դրամ:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ


2008 թ. չորրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով կատարված վճարումների գերակշիռ մասը իրականացվել է էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով: Համակարգի մասնակիցների էլեկտրոնային վճարումները (առանց բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումների) միջին հաշվով կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 52%-ը և քանակի 94.4%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ էլեկտրոնային վճարումների ծավալն ավելացել է 23%-ով (292 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 57%-ով (240301-ով): Բացի այդ, բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումները կազմել են 3399 մլրդ դրամ (ավելացել են 6.3 անգամ): Առևտրային բանկերի կողմից էլեկտրոնային վճարումների համակարգով (առանց բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումների) կատարված վճարումները կազմել են վերջիններիս վճարումների ծավալի մոտ 79.9%-ը (ավելացել են 284 մլրդ դրամով), իսկ քանակի՝ մոտ 99%-ը:

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական քանակը 2008 թ. երրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 1538-ով՝ կազմելով 10356, իսկ ծավալն ավելացել է 4 մլրդ դրամով՝ կազմելով 24 մլրդ դրամ: Բորսայական գործառնությունների իրականացման նպատակով հաշվետու ժամանակահատվածում կատարված փոխանցումների միջին օրական ծավալը կազմել է մոտ 53 մլրդ դրամ (ավելացել է 3.5 մլրդ դրամով):


Էլեկտրոնային վճարումների համակարգում մեկ էլեկտրոնային փոխանցման միջին ծավալը, առանց բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների, նախորդ տարվա չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է մոտ 0.6 մլն դրամով և կազմել է 2.3 մլն դրամ: Էլեկտրոնային վճարումների համակարգով առևտրային բանկերի կողմից բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների միջին ծավալը կազմել 885 մլն դրամ:

Էլեկտրոնային վճարումների համակարգում գրանցված մերժումները կազմել են վճարումների քանակի 0.03%-ը և ծավալի 0.22%-ը (198 փոխանցում՝ 10.9 մլրդ դրամ ծավալով), ընդ որում՝ անբավարար իրացվելիության պատճառով մերժված վճարումները կազմել են համակարգում իրականացված վճարումների քանակի 0.02%-ը և ծավալի 0.2%-ը (162 փոխանցում՝ 10.6 մլրդ դրամ ծավալով):

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված միջին օրական փոխանցումները



Բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված՝ էլեկտրոնային վճարումների համակարգով կատարված փոխանցումները միջին օրական վճարումներում



ՀԱՄԱԽՍՈՒՆ ԹՂԹԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

Առևտրային բանկերի կողմից 2008 թ. չորրորդ եռամսյակի ընթացքում թղթային եղանակով կատարված վճարումները* կազմել են վերջիններիս վճարումների ծավալի 43.4%-ը և քանակի 5.4%-ը (նախորդ տարվա չորրորդ եռամսյակի համեմատ ծավալը ավելացել է 1.7-անգամ, քանակը՝ 3.2-անգամ):

ՀՀ կենտրոնական բանկի միջոցով թղթային եղանակով իրականացված վճարումների միջին օրական քանակը կազմել է 399 փոխանցում՝ 20 մլրդ դրամ ծավալով (2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ փոխանցումների միջին օրական ծավալը աճել է 8.5 մլրդ դրամով), իսկ մեկ թղթային փոխանցման միջին ծավալը 2007 թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է մոտ 27 մլն դրամով և կազմել է 33 մլն դրամ: Նշված փոխանցումները պայմանավորված են հիմնականում ավանդային և ռեպո գործառնություններով, ինչպես նաև գանձապետական փոխանցումներով: 2008 թ. չորրորդ եռամսյակում առևտրային բանկերի միջև թղթային եղանակով իրականացվել է 10 մլրդ դրամ ծավալով 22 փոխանցում:

ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և Գանձապետարանի կողմից իրականացված վճարումները ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով

Ժամանակահատվածը	Համախառն				Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ		Ընդամենը ԿԲ միջոցով*		Բորսայական գործառնությունների հետ կապված փոխանցումներ	
	էլեկտրոնային*		Թղթային							
	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ
2007										
Ընդամենը	3916236	1341687	2188204	44557	861365	7142	6965805	1393386	1821341	8075
տեսակարար կշիռը վճարումներում (%)	56.22	96.29	31.41	3.20	12.37	0.51	100	100		
2008										
I եռ.	1024878	389728	745062	12179	240876	1764	2010816	403671	2422627	3026
տեսակարար կշիռը վճարումներում (%)	50.97	96.54	37.05	3.02	11.98	0.44	100	100		
II եռ.	1022887	488017	691740	16625	163687	1495	1878314	506137	2886558	3236
տեսակարար կշիռը վճարումներում (%)	54.46	96.42	36.83	3.29	8.71	0.29	100	100		
III եռ.	1275574	564371	798290	22434	172482	1376	2246326	588181	3172312	3683
տեսակարար կշիռը վճարումներում (%)	56.78	95.95	35.54	3.8	7.68	0.23	100	100		
IV եռ.	1536657	662776	1281886	38309	131764	1191	2950307	702276	3399058	3837
տեսակարար կշիռը վճարումներում (%)	52.08	94.38	43.45	5.45	4.47	0.17	100	100		
Ընդամենը	4859976	2104892	3516978	89547	708809	5826	9085763	2200265	11880556	13782
տեսակարար կշիռը վճարումներում (%)	23.18	95.07	16.77	4.04	3.38	0.26	100	100		

** Առանց բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների:*

ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2008 թ. չորրորդ եռամսյակի վերջի դրությամբ Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգին անդամակցել են ՀՀ տարածքում գործող 5 գործակալ և 17 դիլեր բանկեր, Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան, Հայաստանի ֆոնդային բորսան, մեկ ոչ բանկ դիլեր, ՀՀ ֆինանսների նախարարությունը (թողարկողի կարգավիճակով՝ պետական պարտատոմսերի հետ կապված), Գանձապետական պահառուն, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկը (կենտրոնական պահառուի կարգավիճակով և թողարկողի կարգավիճակով՝ Կենտրոնական բանկի սեփական պարտատոմսերի հետ կապված):

Համակարգի կողմից պետական (գանձապետական) արժեթղթերի առաջնային տեղաբաշխման և մարման նպատակով ձևավորվել է 558 հանձնարարական՝ մոտ 33.2 մլրդ դրամ ծավալով, ինչը 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 7 մլրդ դրամով (որտեղ արժեթղթերի տեղաբաշխման հետ կապված վճարումները կազմում են 1 մլրդ դրամ): Ընդ որում՝ առաջնային տեղաբաշխման ժամանակ ձեռք բերված պետական պարտատոմսերի դիմաց բանկերի կողմից կատարվել է 20.5 մլրդ դրամի փոխանցում, իսկ պետական արժեթղթերի մարման դիմաց Գանձապետարանի կողմից կատարվել է 12.7 մլրդ դրամի փոխանցում: Այդ թվում՝ «Գանձապետական պահառու» համակարգի միջոցով պետական արժեթղթերի դիմաց կատարվել է 702 մլն դրամի վճարում, որտեղ համապատասխանաբար մոտ 556 մլն դրամը կազմել են արժեթղթերի տեղաբաշխման և մոտ 146 մլն դրամը՝ արժեթղթերի մարման դիմաց վճարումները:

ՀՀ կենտրոնական բանկի սեփական արժեթղթերի առաջնային տեղաբաշխման և մարման նպատակով պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի կողմից ձևավորվել է 57 հանձնարարական՝ 16.3 մլրդ դրամ ծավալով, որը 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 62.5 մլրդ դրամով (ընդ որում՝ 29.9 մլրդ դրամը կազմել են արժեթղթերի տեղաբաշխման, իսկ 32.6 մլրդ դրամը՝ արժեթղթերի մարման հետ կապված վճարումները): Նշված արժեթղթերի առաջնային տեղաբաշխման ժամանակ առևտրային բանկերի կողմից ձեռք բերված՝ Կենտրոնական բանկի սեփական պարտատոմսերի դիմաց կատարվել է 8.9 մլրդ դրամի փոխանցում, իսկ Կենտրոնական բանկի սեփական արժեթղթերի մարման դիմաց՝ 7.4 մլրդ դրամի փոխանցում:

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի մասնակիցների կողմից երկրորդային շուկայում արժեթղթերով կատարված առք ու վաճառքի գործառնությունների դիմաց (առաքում վճարման դիմաց սկզբունքով) իրականացվել է 82 մլրդ դրամի 576 փոխանցում: Նշված ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է մոտ 47%-ով:

ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐ

2008 թ. չորրորդ եռամսյակի վերջի դրությամբ հաճախորդներին պլաստիկ քարտերի տրամադրումը կամ դրանց սպասարկումը իրականացվել է ՀՀ տարածքում գործող 21 առևտրային բանկերի կողմից: Ընդ որում՝ 19 առևտրային բանկեր անդամակցում են «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգին:

Հաշվետու ժամանակահատվածում քարտերի սպասարկման նպատակով տեղադրվել են 59 նոր ավտոմատ գանձման մեքենաներ և 2008 թ. չորրորդ եռամսյակի վերջի դրությամբ դրանց ընդհանուր քանակը կազմել է 538: Այդ թվում՝ «ԱրՔա» պլաստիկ քարտերի սպասարկումը իրականացվում է 468 ավտոմատ գանձման սարքավորումների միջոցով: Առևտրային բանկերի կողմից տեղադրված POS-տերմինալների ընդհանուր քանակը կազմել է 2280, այդ թվում՝ 410-ը տեղադրված է առևտրային բանկերի ստորաբաժանումներում: Տեղադրված իմպրինտերների ընդհանուր քանակը կազմել է 19:

2008 թ. չորրորդ եռամսյակի վերջի դրությամբ գործող «ԱրՔա» քարտերի քանակը 2008 թ. երրորդ եռամսյակի վերջի համեմատ ավելացել է 1.6%-ով (3233 քարտով) և կազմել 200190: Միջազգային քարտային համակարգերի քարտերի քանակն ավելացել է 9.6%-ով (22335 քարտով), այդ թվում՝ VISA միջազգային քարտային համակարգի քարտերն ավելացել են 5.1%-ով (8027 քարտով) և կազմել 165894, իսկ MasterCard միջազգային քարտային համակարգի քարտերի քանակը՝ 27.3%-ով (10245 քարտով) և կազմել 47769: Մնացած մասը բաժին է ընկնում միջազգային այլ քարտերին:

Քարտերով իրականացված գործառնությունների ծավալը 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 43.6%-ով (32 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 44.5%-ով (624535):

Շրջանառության մեջ գտնվող «ԱրՔա» քարտերով իրականացվել է 904169 գործառնություն՝ 40.6 մլրդ դրամ ծավալով: «ԱրՔա» քարտերով կատարված գործառնությունների ծավալը 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ ավելացել է մոտ 47.8%-ով (13 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 37.8%-ով (248142-ով):

ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից տրամադրվող/սպասարկվող քարտերի տեսակները


Բանկի անվանումը	ArCa	MASTER CARD	VISA	AMEX	Այլ քարտեր
Հայբիզնես բանկ	+	+			
Անելիք բանկ	+	+	+		
Արարատ բանկ	+	+			
Ամերիաբանկ	+	+	+		
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ	+		+		
Հայէկոնոմբանկ	+	+			
Պրոմեթեյ բանկ	+	+			
«ԲՏԱ» բանկ	+	+			
Զարգացման բանկ	+	+			
Կոնվերսբանկ	+		+		+
Ինեկոբանկ	+	+			
Մելլաթ բանկ	+				
«Բիբլոս» բանկ Արմենիա	+	+			
Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան	+	+	+		+
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ»	+		+		
Արցախբանկ	+	+			
Կասկադ Բանկ	+	+			
Առէկսիմբանկ		+	+	+	
Յունիբանկ	+		+		
Արդշինինվեստբանկ	+	+	+		
Պրոկրեդիտբանկ			+		

VISA միջազգային քարտային համակարգի քարտերով իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 38.9 մլրդ դրամ (622499 գործառնություն), իսկ MasterCard միջազգային քարտային համակարգի քարտերով իրականացվել է 14.5 մլրդ դրամ ծավալով 229275 գործառնություն: VISA համակարգի քարտերով իրականացված գործառնությունների ծավալը նախորդ տարվա չորրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 25%-ով (7.9 մլրդ դրամ ծավալով), իսկ MasterCard համակարգի քարտերով կատարված գործառնությունների ծավալն ավելացել է 117%-ով (7.8 մլրդ դրամ ծավալով):

Միջազգային այլ քարտերով իրականացվել է 272806 գործառնություն՝ 12.9 մլրդ դրամ ծավալով (2007 թ. չորրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 3.6 մլրդ դրամով):

2008 թ. չորրորդ եռամսյակում քարտերով իրականացված միջին օրական գործառնությունների ծավալը կազմել է 1190 մլն դրամ, իսկ միջին օրական գործառնությունների քանակը՝ 22542: 2007թ. նույն ժամանակահատվածի համեմատ միջին օրական գործառնությունների քանակն ավելացել է 44.5%-ով (6939-ով), իսկ ծավալը՝ 43.6%-ով (362 մլն դրամով): Մեկ «ԱրՔա» քարտով իրականացված ամսական միջին գործառնությունների ծավալը նախորդ ժամանակահատվածի համեմատ ավելացել է 5 հազ. դրամով և կազմել է 45 հազ. դրամ (քանակը կազմել է 1.5):


«ԱրՔա» քարտերի զարգացման դինամիկան



Քարտեր սպասարկող սարքավորումների միջոցով կատարված գործարքները (2008 թ. չորրորդ եռամսյակի ընթացքում)

Սարքեր	Գործարքների ծավալը (մլն դրամ)		Գործարքների քանակը	
	ընդամենը	այդ թվում՝ «ԱրԹա» քարտերով	ընդամենը	այդ թվում՝ «ԱրԹա» քարտերով
Ավտոմատ գանձման սարքերի միջոցով	81647	32053	1700291	756218
այդ թվում՝ անկանխիկ	868	54	20449	9328
POS – տերմինալների/իմպրինտերների միջոցով	24454	8354	283395	130594
այդ թվում՝ անկանխիկ	6272	2282	142173	48405
Ինտերնետ միջավայրում	1040	281	45063	17357
Ընդամենը	107142	40688	2028749	904169
այդ թվում՝ անկանխիկ	8181	2617	207685	75090

ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացված միջին օրական գործառնությունները 2005 – 2008 թթ. ինչպես նաև 2007 – 2008 թթ. եռամսյակների ընթացքում



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Ֆիզիկական անձանց փոխանցումները, առանց բանկային հաշվի բացման, իրականացվում են՝ ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված՝ դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով:

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը հաճախորդների դրամական փոխանցումները արագ իրականացնելու նպատակով անդամակցում են՝ ընդհանուր առմամբ 17 միջազգային համակարգերի:

Դրամական փոխանցումների իրականացման համակարգերը

Համակարգեր	Մասնակից բանկերի քանակը	Մասնակից կազմակերպությունների քանակը	Մասնաբաժինը ստացումների ծավալում, %
UNISTREAM	3		53.26
ANELIK	8	3	10.14
CONTACT	4	4	9.10
MIGOM	7	4	7.87
BISTRAYA POCHTA	6	2	5.76
MONEY GRAM	10	2	3.10
LIDER	5		2.64
INTEREXPRESS	2	2	1.91

ZOLOTAYA CORONA	2		1.41
BLIZKO	2	3	1.10
PRIVAT MONEY TRANSFER	3		0.92
BTF-Sauz	1		0.97
FASTER	1	1	0.53
ALUR	3		0.25
AVERS	2		0.02
XPRESS MONEY	1		-
JIVIE DENGI	1		-
WESTERN UNION*	-	-	0.46
MONEY TUN	-	1	0.08
Travelex	-	1	0.11
STEFI	-	1	0.37

** 2008 թվականի հոկտեմբերից դադարեցվել է անդամակցությունը այս համակարգին:*

2008 թ. չորրորդ եռամսյակի ընթացքում այս համակարգերին մասնակից բանկերի միջոցով Հայաստանի Հանրապետություն փոխանցումների ծավալը կազմել է 115 մլրդ դրամ (քանակը՝ 411055), որը 10.5 անգամ գերազանցել է արտասահման կատարված փոխանցումների ծավալը: Նշված համակարգերով դրամական միջոցների զուտ ներհոսքը առևտրային բանկերի միջոցով կազմել է 105 մլրդ դրամ: Հայաստանի Հանրապետություն փոխանցումների զուտ ներհոսքը 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 0.2%-ով (0.3 մլրդ դրամով), այսինքն՝ գրեթե պահպանվել է նույն մակարդակը: Այս համակարգերով Հայաստանի Հանրապետություն կատարված մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 281 հազ. դրամ. 2007թ. չորրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 7 հազ. դրամով:

ՀՀ առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով (SWIFT-ի, Տելեքսի, ֆաքսի միջոցով) Հայաստանի Հանրապետություն կատարված փոխանցումների ծավալը 2008թ. չորրորդ եռամսյակի ընթացքում կազմել է 725 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 52598 փոխանցում: Մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 13.8 մլն դրամ. նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ աճել է 6 մլն դրամով:

ՀՀ առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով իրականացված փոխանցումներում ֆիզիկական անձանց ուղղված վճարումները կազմել են մոտ 95 մլրդ դրամ. նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 52%-ով (32 մլրդ դրամով). մեկ վճարման միջինը աճել է 290 հազ. դրամով և կազմել 2.9 մլն դրամ: Միաժամանակ, բանկերի թղթակցային հաշիվներով ֆիզիկական անձանց փոխանցումները արտասահման կազմել են 74 մլրդ դրամ, որի արդյունքում ֆիզիկական անձանց փոխանցումներում դիտարկվում է դրամական միջոցների զուտ ներհոսք՝ 21 մլրդ դրամ ծավալով:

